Շվեդիա Sverige | Eurasia Partnership Foundation | All Rights Foundation

#Աշնանային_Թվային_Դպրոց
#Digital_ Autumn_School

# Ի՞ՆՉ Է VPN-Ը



Շվեդիա Sverige

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

All Rights FOUNDATION

#Աշնանային_Թվային_Դպրոց
#Digital_ Autumn_School

**VPN-ը վիրտուալ մասնավոր ցանց է, որը թույլ է տալիս անվտանգ միանալ համընդհանուր ցանցին, ապահովել Ձեր գործողությունների գաղտնիությունն ու թվային անվտանգությունը:**



**VPN–ն օգնում է թաքցնել ձեր իրական IP հասցեն և ապահովում է բրաուզերում վեբ կայքի անանուն դիտում: Այսօր գրեթե բոլոր կայքերը հետևում և ինֆորմացիա են հավաքում ձեր մասին, ֆիքսում են ձեր գտնվելու վայրը, ինտերնետում անցկացրած ժամանակը, հետաքրքրությունները և այլն, այդ թվում՝ անձնական ինֆորմացիան:**



**VPN-ի միջոցով դուք կարող եք.**

**Շրջանցել կայքերի աշխարհագրական սահմանափակումները կամ հոսքային աուդիո և վիդեո հոսքերը:**



**VPN ցանցերը օրինական են, ավելին դրանք հաճախ օգտագործվում են առևտրի ոլորտում ընկերության տվյալների պաշտպանության և համակարգի նկատմամբ աշխատակիցների հասանելիության, ինչպես նաև խարդախություններից և հաքերներից տվյալները պաշտպանելու համար:**



**Եթե ձեզ չի անհանգստացնում այն փաստը, որ համացանցում ձեր ակտիվության պատմությունը հասանելի է պրովայդերին, եթե ձեզ չի անհանգստացնում որևէ գովազդ կամ չկան տարբեր կայքեր մուտք գործելու սահմանափակումներ, ապա, գուցե, անհրաժեշտ չէ միացնել: Իսկ եթե ցանկանում եք պաշտպանել սեփական տվյալները և ապահովել համացանցում գործողությունների գաղտնիությունը, ապա այս գործիքը հենց ձեզ համար է:**

Շվեդիա Sverige

Eurasia Partnership Foundation

All Rights Foundation

#Աշնանային_Թվային_Դպրոց
#Digital_ Autumn_School

## VPN-ների մի քանի օրինակներ ներբեռնելու համար

**TunnelBear-սա կարող է հեշտությամբ տեղադրվել նույնիսկ, եթե դուք սկսնակ եք կամ նախկինում չեք օգտագործել VPN:**
**Speedify-այն բաղկացած է շուրջ 200 երկրների սերվերներից, անվճար է:**
**SurfEasy-ն թույլ է տալիս միաժամանակ օգտագործել մինչև հինգ սարք անվճար:**
**Betternet-կարող եք անվճար օգտագործել 7 օրվա ընթացքում:**